

ԾԱՊԱԿԻ ԶԱՐԱԹՐ ԵՐԿՈՒ ԱՆ՝
գամ կը հրատարակուի Զորեք-
աթի եւ Շաբաթ օրերն : —
տարեկան բաժանորդագրութեան
գինն է 400 դրուշ արծաթ : —
վեցամեայն 50 . — Գաւառաց
համար 445 դրուշ : — վեցամ
սեայ 60 . — Ծանուցման տողը
5 դրուշ :

ԻՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ



Որ եւ է նամակ կամ գրութիւն
պէտք է ուղղել :

Ա. Արտոնատէր և Տնօրէն
ԱՆՏՈՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Էսկի Զապիկէ Ճատտէսի
Նշան էջ. Պէրպէրեանի Տպա-
րանն :

Խմբագրութեան յանձնուած
գրութիւնք ետ չեն տրուիր :

ԱՐՏՈՆԱՏԵՐ
ԱՆՏՈՆ ՍԱՔԱՅԵԱՆ

40 ՓԱՐԱ

ՀԱՆԴԵՍ

ՓԱՐԱ 40

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Զ Ա Ղ Ա Յ Ա Վ Ա Ն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային Տեսութիւն (Գործ և արդիւնք). —
Գեր. Իզիրլեան Սրբազան — Ժամանում. —
Միրիճանեան վարժարան. — Իւսկ. Ս. Խաչ
Թաղ. — Ազգ. — Այլ և այլք. — Առ Արիստ-
լան. — Ասկէ անկէ. — Նոր դեղ մը. — Փոխ
ուած փառեր. — Քաղաքակրթութեան չա-
ները. — Վերջի իլլէթի. — Զանազանք. — Վի-
սլասանութիւն. — Անիճեալ. — Եղիկը. — Ծա-
նուցմունք

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳՈՐԾ ԵՒ ԱՐԴԻԻՆՔ

Բ.

Այժմ խօսինք Տնտեսական խոր-
հրդոյ վերաբերմամբ :

Յիշեալ խորհրդոյ պաշտօնն է, ինչ-
պէս կը գծէ Ազգային Սահմանադ-
րութիւնը՝ «Կ. Պօլսոյ մէջ գտնուած
Ազգային բոլոր Հաստատութեանց և
անոնց կալուածներուն մատակարարու-
թեան ընդհանուր տեսչութիւնը : Իւր
պարտաւորութիւնն է՝ նոյն հաստա-
տութեանց բարեկարգութեանը ան-
խոնջ հսկել և հոգ տանիլ» :

«Տնտեսական խորհուրդը պէտք է
հոգ տանի որ ամեն Ազգային կալուած
օրինակոր կալուածագիր ունենայ : Թէ՛
Կ. Պօլսոյ և թէ՛ գաւառներու մէջ
գտնուած Ազգային անշարժ ստացուա-

ծոց կալուածագրերուն օրինակները,
Տնտեսական խորհրդոյ ձեռք ժող-
վուելով՝ Պատրիարքարանի դիւանա-
տան մէջ պիտի պահուին» :

«Ազգային ո՛ր և է կալուածոյ գնու-
մըն ու վաճառումը չկրնար տեղի ու-
նենալ, առանց Տնտեսական խորհրդոյ
գիտութեան, Բաղ. Ժողովոյ հաճու-
թեան և Պատրիարքի կնքով հաստա-
տութեան» :

«Այս տրամադրութեանց ուժովը
եկեղեցիներու (Մէ-Բէ-Է-Լ-Է-Բէ-Ն) ըս-
ուած բանը վերցուած է Հայոց Ազգին
համար :

«Կ. Պօլսոյ և շրջակայից մէջ՝ Ազ-
գային ո՛ր և է շինութեանց կամ վե-
րանորոգութեանց չկրնար ձեռնարկուիլ
առանց գիտութեան Տնտեսական խոր-
հրդոյ, և հաճութեան Բաղ. Ժողովոյ» :

«Տնտեսական խորհուրդը՝ Ազգային
Ելեւմտից, Կտակաց և Հիւանդանոցի
Հոգաբարձութիւններուն նաեւ Թաղ.
խորհուրդներուն մատակարարութեանը
վրայ հսկողութիւն պիտի ընէ, և ա-
տոնց ամէն մէկէն որոշեալ ժամանակ-
ներ հաշիւ պահանջելով, Բաղ. Ժողո-
ւոյն պիտի հաղորդէ» :

«Տնտեսական խորհուրդը տարե-
գլխէն երկու ամիս առաջ՝ յետագայ
տարւոյ մէջ ըլլալիք հասոյթն ու ծախ-
քը ելեւմտից Հոգաբարձութեանէն ըս-
տուգելով, հաշուեկշիւը պիտի պատ-
րաստէ և Բաղ. Ժողովոյն ներկայա-
ցունէ» :

Ահաւասիկ այն օրինական տրամա-
դրութիւնք որ կը վերաբերին Տնտես.
խորհրդոյ պաշտօնին և պարտաւորու-
թեանցը :

Սահմանադրութեան հաստատու-
թենէ, այն է, 30 տարիէ հետէ ու-
նեցանք Տնտես. խորհուրդներ : սա-
կայն հազիւ կէ յիշուին 2—3 Տնտես.
խորհուրդք որ արդի Պատ. Տնտես
խորհրդոյ խղճամիտ պաշտօնավարու-
թիւնը, իւրեանց պաշտօնի գիտակ-
ցութիւնն ունեցող և իւրեանց դիրքն
ու ազդեցութիւնը պահող լինին :

Օրինակով հաստատենք :

Իւսկիւտար Ս. Խաչ Թաղի Թաղ.
խորհուրդք Սահմանադրութեան հաս-
տատութենէ իվեր իւրեանց մատակա-
րարութեան հաշիւը չեն ներկայած
երբէք. բայց արդի Պատ. Տնտեսական
խորհուրդը ամեն ջանք ի գործ դրած
է նոյն 30 տարիներու հաշիւը պահան-
ջել ուրոյն յանձնախմբի միջոցաւ :

Դարձեալ, Գոււմ-Գափուի դրսի
Թաղ. խորհուրդք 20 տարիներէ հետէ
հաշիւ ներկայած չեն, բայց արդի
Տնտես. խորհուրդը, նոյնպէս ուրոյն
Յանձնախմբի միջոցաւ կը պահանջէ
զայդ յետեալ հաշիւներ :

Դարձեալ, Պալատու արդի Թաղ.
խորհուրդէն կը պահանջէ նորաչէն
բաւարի հաշիւը :

Յաւագիւ յիշեալ Թաղ. խորհուրդը
առ ի չդոյն ի գոյ ածած է նոյն կալ-
ուած, որ վասն գոհունակութեան ար-

ժանի է, բայց իհարկէ ապագայ ղեղձմանց առիթ չտալու համար պարտի այդ խորհուրդ օրինաւորութիւնը յարգել :

Յիշենք այս առթիւ թէ գտնուած են թաղ խորհուրդք, որպէս յանցելուն Մայր-եկեղեցւոյ թաղ խորհուրդք, որ տոկոսաւոր փոխառութեամբ խորհրդարանի կազմ կարասի պատրաստած և կամ շուայ ծախքեր ըրած են :

Նոյնպէս, գտնուած են թաղ խորհուրդք, որպէս է Մայր-եկեղեցւոյ նախնի թաղ խորհուրդներէ մի քանին, որ ի պատճառս իւրեանց յոռի մատակարարութեան պարտքեր ըրած, տոկոսներ վճարած և կալուածներ վաճառած են, բայց ինչ որ զարմանալի մանաւանդ զայրանալի է, սա է թէ ըրածներն իրենց քովը մնացած է առանց երբէք տուեցելու, և գէթ բարոյական պատժոյ իսկ առանց արժանանալու :

Կան անշուշտ ուրիշ թաղ խորհուրդներ ալ նոյնպիսի պարտադանցութեան մէջ գտնուող :

Արդ, յիշեալ թաղ խորհուրդք ի հարկէ չպիտի համարձակէին նմանօրինակ պարտադանցութիւններու մէջ գրտնուիլ, բռնաբարել աղգային օրէնքն և փաստել հանրային շահուց՝ իւրեանց պաշտօնը չարաչար դործածելով և անարգարանալի ղեղձումներու պատճառ լինելով, եթէ նոյն ժամանակաց Տընտեսական խորհուրդք փոխանակ իւրեանց անտարբերութեամբ քաջալերելու այս կարգի զեղծումները, հետեւող լինէին արդի Պատ. Տնտեսական խորհուրդոյ գովելի օրինակին, ի հարկէ խղճամիտ ոգւով ի դործ դնելով իւրեանց պաշտօնի պարտականութիւնը :

Այսու թէպէտ խստապահանջ պիտի կոչուէին, բայց պատիւ է խստապահանջ և աններող կոչուիլ Ազգային հոկոդ մարմնոյ համար, քան թէ անուշ տեղը կատելու քաղաքականութեան հետեւելով՝ քաջալերող լինիլ կարգ մը ղեղձումներու, որք կը վընասեն հանրային օգտի և շահուց :

Յարենք այս առթիւ թէ կէտիկփաշայի արգիլ թաղ խորհուրդք այս պահուս ծանր պատասխանատուութիւն մը կը հրաւիրէ իր վրայ ի տես չդնելով իւր հաշուեկշիռը հակառակ

Տնտես. խորհուրդոյ պատուէրին :

Յիշեալ խորհուրդն այսու հակասահմանադրական ընթացքի մէջ կը գտնուի, ոյր վրայ կը հրաւիրենք Տընտեսական խորհուրդոյ խորին ուշադրութիւնը, վստահ լինելով թէ իւր իշխանութիւնն ի դործ դնելով հարկ չթողուր չփոթութեանց և առաջը կ'առնու ախպիսի ղեղձմանց :

Ունինք տակաւին խօսելիքներ :

ԳԵՐ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ

Ն. Գերապատուութիւն վաղն իւսկ. Ս. Կարապետ եկեղեցւոյ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ նոյնին տօնախմբութեանն առթիւ :

ԺԱՄԱՆՈՒՄ

Ազնուա. Կարապետ էֆէնտի Սըվաճեան որ Օսմ. Կայս. Պանքայի կողմէ մի քանի ամսէ հետէ կարեւոր պաշտօնով մը ի Փարիզ կը գտնուէր, երեքշաբթի օր մայրաքաղաքս վերադարձաւ :

Գոհացուցիչ է տեսնել թէ Սվաճեան էֆէնտի իւր արժանեօքը, փութաջան գործունէութեամբ և հաւատարմ ծառայութեամբ կը վայելէ միշտ յիշեալ մեծ հաստատութեան լիուրի վստահութիւնն և համակրանքը :

ՄԻՐԻՃԱՆՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վաղն տեղի պիտի ունենայ ընդ նախագահութեամբ իզմիրեան Գեր. Տ. Մատթէոս Ս. Արք. եպիսկոպոսի յիշեալ վարժարանի մրցանակաբաշխութեան հանգէսը :

Տարեկան քննութիւնը աւարտած են մեծ յաջողութեամբ :

ԻԻՍԿ. Ս. ԽԱՉ ԹԱՂ

Յիշեալ թաղի Պատուարժան Հոգաբարձութիւնն կը խնդրէ մենէ ծանուցանել թէ տեղւոյն երկսեռ վարժարանաց Մանկական-Պարտիզի քըննութեանց հանգէսն պիտի կատարուի վաղն 8 յուլիս, ի ժամ 7, ի Լսարանի վարժարանացն :

ԱԶԴ.

Կը խնդրուի այն ամեն ազնիւ Բաժանորդներէ՝ —աստ և թէ ի գաւառըս—որ տակաւին չեն վճարած իւրեանց բաժանորդագինն, բաժնահաճին անյապաղ յղել, որով անշուշտ գիւրութիւն կը նուիրեն մեր սոյն գոծուար և ծանր գործին :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Թղթեալ, Դեղինեք և Կանեկեքներ

Գերմանական թղթի գործատուն մ'ամէն տեսակ մեղեխներն և ունեւելները թղթէ չինելու արտօնագիր մ'առաւ : Այս մեղեխներն և ունեւելները փայտէ չինուածներուն շատ կը նմանին, և անոնց համեմատութեամբ, մեծամեծ առաւելութիւններ ունին, որոնց գլխաւորներն են թեթեւութիւն, դիմացկունութիւն և աժանութիւն : Արոնք առաձգական ըլլալուն՝ երբեք չեն ճեղքիր. նոյնպէս փայտեայ ունեւելաց չափերուն պէս ալ խոնաւութեանէ չեն փխսուիր :

Նախաձեռնողներ Կարգաւոր

Նորերս Նոր-Սելանտի Աքորսն քաղաքը՝ քանի մը գործավարներ կալուած մը ցանկով պատած ժամանակը նախաջնեղեղեղեղեղ ժամանակէն մնացած հսկայ անտառոյ մը մնացորդները գտան : Գտնուած ոսկրները կմախք մը կը կազմեն՝ անասնոյն ողնայարն ու կողն ամբողջ են. Կմախքը 130 ոտք երկայնութիւն ունի, իսկ ողնայարին փողին բարձրութեան տրամագիծը 17 մատնաչափի կը հասնի : Այս մնացորդներուն՝ անասնոց որ տեսակին վերաբերիլ տակաւին յայտնի չէ :

Փորագործական Գիտութիւն

Բակտերիալոգիական գիտութեան զարգացման հակառակ՝ փտաբուժութիւնը գործնական մասին երեւելի յառաջդիմութիւն չէր ըրած մինչեւ հիմայ, Պատճառն այն է՝ որ այնպիսի փտաբուժական նիւթ մը կը պակսէր, որ մէկ կողմանէ կարող ըլլար թարախի ցպիկները բնաջինջ ընել առանց մարդկային դործարանաց փաստելու, և մէկալ կողմանէ այնպէս տարածական ըլլար, որ փտած մարմնոյն ամէն մաս

սանց մէջ կարենար դիւրութեամբ մըտնել թափանցել, Այսպիսի փտաբուժական նիւթ մը գտաւ աւասիկ Տ. Յակոբ Սգրասպուրկի համալսարանի ակնաբուժութեան ուսուցչապետը, և իւր խուզարկութեանց արգասիքն՝ այս օրերս լայն տեսած գրքոյկի մը մէջ ամփոփեց որուն անունն է՝ Անիլին Փարպսթօրֆ ալ Անգլիէթգիքա:

Տնկարանից արդարեւ ծանօթ էր թէ Անիլին քսուած ներկանիւթն առողջութեան փնտրտակար ցարկներն ու սքնկիկները ջնջելու զօրութիւն ունի, սակայն Տր. Սգրիգիին ակնաբուժական օրոյն յատկութիւնն յօգուտ գործածելու խորհուրդն ունեցաւ ի սկզբան անդ ճագարներու և ուրիշ անասնոց՝ և յետոյ մարդու վրայ ըրած փորձերը մեծ և անակնկալ յաջողութեամբ պսակուեցան:

Երանի՛ թէ այս նորագիւտ կարելոր դարմանն և եւս փորձուելով՝ ամէն դի սփռուէր յօգուտ ախտաժէտ մարդկութեան:

Մասնաւորութիւն

Թղթի գործածութիւնն օր ըստ օրէ աճելով հարկաւոր քանակութեամբ թուղթ մատակարարելու պատշաճ դարման մը տանելու համար նորահնար միջոցներով թուղթ պատրաստելու ձեռնարկութիւններն անպակաս են: Այսպէս Շուէտի մէջ նորերս այնպիսի թուղթ մը սկսան շինել, որուն նիւթը սպիտակ մամուռն է, որ մեծ քանակութեամբ կը գտնուի հին Այս նորագիւտ թուղթը գրելու յարմար է, և մեր դործածած թղթոյն պէս չի դեղնիր և ոչ ալ դիւրաւ կը փճանայ: Արուեստագէտներն ասոր մեծ ապագայ կը խոստանան:

Արուեստական աղամանք

Արուեստական կերպով աղամանդ շինելն, որ ինչպէս յայտնի է զուտ ածխածնէ կը բաղկանայ, ամենամեծ առեղծուածներէ մին է, և աշխարհիս բնագէտներն ու քիմիագէտներն երկայն ժամանակներէ ի վեր կը զբաղեցնէ: Շատ ժամանակ յառաջ Ամերիկայի ուսուցիչ մ'ի հրապարակ ելլելով ուղեց հաւատացնել թէ ինքն այս խընդիրս լուծած ըլլայ, և ցուցուց միանգամայն այնպիսի մանր և տձեւ բիւրեղներ՝ որոնք աղամանդի գլխաւոր

յատկութիւններէն շատերն ունենին: Նոյն ժամանակէ ի վեր աղամանդ շինելու գիւտին վրայ բան մը չլսեցինք, և կ'երեւայ թէ նոյն գիւտին արժէքն այն կողմանէ աւելի խնդրական է, որ արուեստիւ շինուած քարերու արժէքը ծախուց համեմատութեամբ շատ նւազ է:

Ընդհակառակն հիմա կ'ըսուի թէ անգղիացի մը՝ Սր. Բարսօն, յաջողած է գաւազանաձեւ ածուխներու վրայ աղամանդի փոշւոյ խիստ թանձր խաւ մը յառաջ բերել, և պէտք ենք ըսել թէ այս գիւտոյ գործնական մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ այս եղանակը պարզ ըլլալով՝ շատ ծախուց պէտք չունի: Ռիքարտոս Լիւտեդի տուած տեղեկութեան համաձայն, ուրուաքարի ածխէ պատրաստուած ամենալաւ ածխոյ գաւազանները ընդանդրուկէ խունամերձէ, աւշակէ և ծծմբածխէ բաղկացեալ հիւթով կ'օծուին, քիչ ածխոյ և մանրուած որձաքարի հաւառարաչափ խաւերով լեցուած սանի մը վրայ կը գրուի: Ածխոյն երկու ծայրերն ելեկտրական շարժիչ մեքենայով մը իրարու կը հաղորդուին, որով ածուխը հրաշէկ կ'ըլլայ: Ասով գաւազանաձեւ ածուխներու վրայ, ինչպէս ըսինք, բոլորովին մանր բիւրեղներէ կազմուած հաստ խաւ մը կ'երեւայ: Այս բիւրեղներն աղամանդի յատկ յատկութիւններն ունին և չողակն յղկելու կրնայ գործածուիլ:

(Հանքէն Ամսթերայ)

ԱՍԿԵ ԱՆԿԵ

Օ՛, բարեկամ, աս ո՛ւր էք, չէք տեսնուիր:

— Ինքզինքս կը վարժեցնեմ:

— Ինչ բանի:

— Հեռու կենալու ձեռնէ:

— Ինչո՞ւ, ի՞նչ կայ որ:

— Որպէս զի վաղն եթէ Գաղ ժողովոյ ալ անդամ ընտրուիր, ճանքան անցած ատեննիդ բարեւի կենամ:

✱

Ամբակում աղա, հարսնիքդ ե՛րբ է:

— Ո՛ր հարսնիքս:

— Տէր ողորմեա, ադ ի՞նչ հարցում է:

— Վասնզի երկուշաբաթը անցաւ որ րբի:

— Եա հապա չիմացանք նէ:

— Ձանը ետքը պիտի լիլայ:

ՆՈՐ ԴԵՂ ՄԵ

Օր մը հարցուցին մէկու մը թէ ի՞նչ կընէ որ բնաւ հիւանդ չըլլար:

Է՛հ, ի՞նչ պիտի ընեմ, սովորական ատենին ճաշ կընեմ, որչափ կարելի է քիչ կուտեմ, ժամանակին կը պառկիմ, ժամանակին կարթնեմ, ուրիշի դործին բնաւ չեմ խառնուիր, միայն իմ գործիս կը պարապիմ ոչ ուրիշի գաղտնիք կը հաղորդեմ, ոչ ուրիշի գաղտնիք իմանալու հետաքրքիր կըլլամ, ուրիշը չեմ բամբասեր, եթէ այլք բամբասեն զիս, բնաւ հոգ չեմ ըներ, եթէ իմ վրայ պարսաւանաց արժանի բան մը չունիմ կարողութիւնս կը ճանչնամ, չափէս աւելի ծախք չեմ ըներ, պարտք բնաւ չեմ ըներ ու շատ հարուստ ըլլալու համար ալ միտքս չեմ յոգնեցներ և փոխանակ շատ ունեւալով քիչ գոհ ըլլալու և կամ բնաւ գոհ չըլլալու՝ ինքզինքս վարժեցուցած եմ քիչով շատ գոհ ըլլալու:

Ահաւասիկ այս է, յարեց, իմ կեանքիս կանոնը. որուն անվրէպ հետեւելով՝ անհանգստութեան պատճառ ունեցած և կամ հիւանդ եղած չեմ:

Փորձելու համար մարդ կրնայ սոյն կանոնին հետեւիլ:

ՓՈՒՈՒԱԾ ԲԱՌԵՐ

Կան բառեր, որ տաքեր ճիւղերու մէջ կիրառութեամբ տարբեր նշանակութիւններ կոտան:

Օրինակի համար «շարհակալ եմ» բառը երբ գործածուի տարբեր պարագայի մէջ, բոլորովին հակառակ իմաստ կ'արտադրէ, այն է, հեղնական իմաստով գործածուելով՝ «բնաւ գոհ չեմ» ըսել է:

Նոյնպէս, «կ'ըլլեմ» բառը, ինչպէս յայտնի է, կուլ տալ, մարսել, կը նշանակէ, բայց երբ ըսուի թէ՛ «դուն ալ գիտցիր որ ես ատ՛ բանը կ'ըլլեցի» կը նշանակէ թէ՛ «մի՛ կարծե՛ր որ խառուեցայ», այսինքն, զիս ապուշի և տխմարի տեղ մի դներ:

Այս բան կենաց պայքարի մէջ ըս:

տէպ կը պատահի, և պէտք է յարե՛ր թէ ընդհանրապէս ապուշ և տխմար են անոնք, որ զայլս ապուշի և տխմարի տեղ կը դնեն:

Անցնինք «առժամանակեայ» բառին.

Այս բառ ազգային ճիւղի մէջ պէտք է գիտնալ թէ կը գործածուի միշտ բոլորովին հակառակ իմաստով, այն է՝ «հայտնի» նշանակութեամբ:

Զորօրինակ՝ Պէղճեան և Լուսաւորչեան վարժարանաց հանգուցեալ տընորէնին — որուն Աստուած հոգին լուսաւորէ — մահուան հետեւեալ օրը, ըմբն. Տ. Յարութիւն Սրբազան իշխեալ վարժարանաց այցելութիւն մը տալով, աշակերտաց մի քանի միւթարական խօսքեր ուղղելէ վերջ, համաձայնութեամբ առժամանակեայ հանգուցեալ Թաղական խորհրդոյ, արդի առժամանակեայ տնօրէնը ներկայացնելով ըսած էր. «Ահա ասիկ վարժարանիս առժամանակեայ տնօրէնը . . . և այլն»:

Հարկ չկայ ըսելու թէ այդ առժամանակեայ տնօրէնն է որ ցարդ (գրեթէ 3 տարի) կը վարի իւր առժամանակեայ պաշտօնը անշուշտ ի մեծ գոհունակութիւն . . . (է՛հ, շիտակ խօսողը մե՞նք ենք . . .)

Անցնինք «բաշխում» բառին:

Ձկարծուի թէ խնդիրը ժառանգութեան մը վրայ է, գոր հարկ ըլլալ բաշխել (տես թէ Պատրիարքարանի պաշտօնեայք ալ ի՞նչպէս ականջնին սրեցին արդարութեամբ):

Յայտնի է թէ ըստ Սահմանադրութեան ամեն երկու տարին անգամ մը փետր. ամսոյ սկիզբը երեսփոխանական բաշխում պիտի կատարուի, որ սակայն Սահմանադրութեան հաստատութենէ ի վեր երկու անգամ իսկ տեղի ունեցած չէ, և մեր արդի Ազգ. վարչութիւնը իւր կազմութեան օրէն իրեն կէտ նպատակիկներէ մին ալ ըրած էրեր եսփոխանական բաշխում կատարել և առ այս, նոյնպէս ըստ Սահմանադրութեան, Յանձնաժողով մը կարգեց. բայց որովհետեւ տարին անցաւ և բաշխումը չբաշխուեցաւ և կարգ մը տէմիր-պաշ երեսփոխան Տեարք (որոնց երեսփոխանական պաշտօնավարութեան շրջանը թէեւ տարին երէ հետէ լրացած է, սակայն ազ-

գասիրաբար դեռ կը բազմին իրենց աթոռներու վրայ անշուշտ վասն պարապ ոչ չթողելոյ, բայց Բերայի Տեարք երեսփոխանք, որ կը թուին թէ ասոնց չափ աղգասիրութիւն և անձնուիրութիւն ունենալու չեն որ մեր պաշտօնավարութեան շրջանը լրացած է ըսելով չեն երթար իրենց աթոռներուն վրայ, խնայելով որ մի՛ գուցէ յատհինան և միտան արգային շահուց) կերեւայ թէ Յանձնաժողովն ալ իր ընելիքը մոռցաւ և բաշխումը մնաց անբաշխ, որ է արդի նշանակութիւնը բաշխում բառին:

Ի՞նչ է որ, անցնինք մեր նպատակին:

Բաշխում բառն ալ կը դուրի թէ մեր Սահմանադրութեան մէջ իբր սիւս դրուած է, և կամ, առժամանակեայ բառին նման ճշգ ու ճիշդ մնայուն կը նշանակէ:

Ուստի, մենք ալ, քստ այսմ, կ'առաջարկենք յետ այսորիկ այդ կարգի բառերը գործածել իրենց արդի նշանակութեամբը, որպէս զի թիւրիմացութիւններու հարկ չմնայ:

ՔԱՂԱՔԱԿՐԺՈՒԹԵԱՆ ԶԱՐԻՔՆԵՐԸ

ՕՐԻՆԱԿ Բ.

(Նախորդ թուէն)

Գիշերային պտուղի միջոցին:

Միւսիւ ճիւղէ, բէգ մէմունն օլտում պու ագչամքի թուրումուզտան, մա բարօլ քի մուղիգատա բէք մէնշուր շէյ տիր:

— Պէնտէ, մատմաղէլ, քէնտիմէ բէգ պէօյիւկ օնօռ աստ իտէրիմ քի պու ագչամ սիղի իլէ թուր էտէյօրում վէ զիյատէսի իլէ մէմունում քի սիղտէ բլէզիր տույուպ ամիւզէ էտէյօրում նուզ:

— Տօղրուսու, չօգ թրէղակրէապլը վէ թրէ մանեիֆիգ պիր թուր էտէյօրում:

— Բէճա էտէրիմ, ֆաթիկէ օլուր սանըղ սէօյլէին պէնտէնիզէ, էմր էատիլինիլ մահալտէ օթուրալլի:

— Պէօլէ եէրտէ ինսան ֆաթիկէ օլուր մը հէր թարաֆը կիւզէլ մէշհուր, ակրէապլը, բօթիգ վէ մանեիֆիգ ինսան կէզէրսէ բէգ պէօյիւկ բլէզիր տույուր:

— Նասըլ էմր էտէրսէնիզ, մատմաղէլ, սիղին տիսօղիսիօնունուզուն թահ տընտալլի:

— Բարտօն, միւսիւ վէնսան, զիյաւաէսիլլէ բէգ պէօյիւկ սօյ օնօռ էտէյօրում նուզ:

— Ըստաֆըրլա, վազիֆէմի իյֆա էտմէզլէ միւշէրրէֆ օլուրում:

— Պիլմէմ քի նէ՛ եօլտա մէրսի էտէյիմ սիզէ:

— Բէճա էտէրիմ, մատմաղէլ, ասլա սըզըլմայըն. սիղին տույուրում նուզ բլէզիր պէնիմ իչին բէգ պէօյիւկ սօյ պիր օնօռ տըր:

— Կրան մէրսի:

— Բիէն, բիէն:

Վերջապէս. այս և այսպիսի ծիծաղաշարժ գէպքեր և տեսարաններ, որ մարդու խնդուքը կը շարժեն, ամեն տեղ պակաս չեն, և ոյց շարժառիթն է իբր թէ սիվիլիզէ — քաղաքակրթեալ երեւնալ, միշտեւ բնաւ քաղաքակրթութիւնն չէ, այլ պարզապէս օտարի նմանելու — ներուի մեղ ըսել — կապկութիւն, որ քաղաքակրթութեան բառարանին մէջ բոլորովին մի տարբեր նշանակութիւն ունի:

Փափագելի է անշուշտ որ օտարի նմանելու անարգ սովորութիւնը վերջ գտնէր և մերայինք հետեւէին բուն քաղաքակրթութեան, ուր պահանջումներէ մին ալ իւրաքանչիւր ազգ իր լեզուն և ազգային յարգելի սովորութիւնները անվթար պահպանելու մէջ է:

(Շարունակելի)

ԳՐԻԳՈՐ ԶԱՔԱՐԵԱՆ

ՎԿՅԵՆԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ իւր զըրասնեակը հաստատած է Պ. լիւս, Պաղչէ Գափու, Համիտիյէ թիւրպէսի կից Գաղասքէր խան թիւ 6:

Եւ թէ՛ կատանձնէ վարել ամէն կարգի գատեր չափաւոր ուղամաններով և խմբադրել թուրքերէն, հայերէն և ֆրանսերէն լեզուներով ամէն տեսակ դատական և վաճառականական գրութիւններ:

Պարզ խորհրդակցութեանց համար փոխարինութիւն չպահանջուիր:

ԱՌ ԱԼՓԱՍԼԱՆ

Ա Ղ Ե Ր Ս Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ի Ն

Անցեալ տարի էր, յիշեմ, ամառուան մէջ օր մը զըւարթ,
վարդ, վարդ, վարդ.
Սիւքն անուշիկ՝ պարտիզին ծաղկէն քաղէր բիւր համբոյր,
բոյր, բոյր, բոյր,
Երբ քանի մը ընկերներ կը բռնէինք կամացուկ
ձուկ, ձուկ, ձուկ,
Նստած ծովուն եզերքը, կամ ի նաւակ թիավար,
վար, վար, վար,
Եւ հեշտաձայն կուղղէինք երգեր յերկինս ի նըւէր,
վեր, վեր, վեր:
Ահ, ո՛ւր դացին այն օրեր, հեշտազուարճ, գեղեցիկ,
ձիգ, ձիգ, ձիգ,
Թեւեթն կայտուէր ջըրոց տակ, փփփ վրան կը ցատկէր,
կեր, կեր, կեր,
Այն օրն էր որ տակաւին, գիտեմ, խեղքս գըլուխ էր.
սէր, սէր, սէր.
Կը գըրէի աշխուժիւ, կը գըրէի շընորհքով
գով, գով, գով,
Հիմա գըլուխս է խառն, սկանջներըս կը թնդան
դան, դան, դան
Եւ շատ անգամ կը նստիմ առանձնակի մինաւոր,
որ, որ, որ
Մէկը չըգայ խանգարէ խորհուրդներս ամօքիչ
քիչ, քիչ, քիչ,
Կը վախնամ որ ասանկով ինձ գերեզման չուտ բացուի,
վիհ, վիհ, վիհ,
Լըռեն յաւէտ աստանօր ձայնս ու գրիջ միասին
սին, սին, սին
Կամ թէ ախտ մը գայ վըրաս, կամ թէ առնեմ անյապաղ
պաղ, պաղ, պաղ,
Եւ բըժիշկներն ինձի տան կամ հինտեաղի կամ եանօս
հոս, հոս, հոս:
Փորհարուծիւն գէշ բան է, պիրա խըմեմ, խաղ կանչեմ,
չեմ, չեմ, չեմ.
Կամ թէ վերը ի վոսփօր ցատկուտեմ ես փիացան
ցան, ցան, ցան
Եւ աղջիկներ իմ ձայնէս չորս դիս դիզուին ճվըլան,
լան, լան, լան,
Մէկուն ըսեմ, աղւոր ես, և մէկալին՝ նօնօշիկ,
չիք, չիք, չիք...
Լըսէ աղաչանքըս, Տէ՛ր, և վերջ մը դիւր իմ ողբոց,
բոց, բոց, բոց
Թափէ՛ շընորհքդ վըրաս, որպէս իդաշտ ցօղ զովիկ,
վիկ, վիկ, վիկ,
Ձերէ ա՛լ շատ քաջեցի, կարողութիւնըս հատաւ,
տաւ, տաւ, տաւ.
Ո՛չ ապաքէն ես ալ, Տէ՛ր, մի զաւակդդ եմ տօգոհ,
ոհ, ոհ, ոհ...
ԽԱՅԹ

ՎԵՐԵՄ ԻԼԼԵԹԻ

Քիւրբէյի արդտա մէվճուտ պու-
լունան տօքթօրուն, պիր վագըթտան
պերու ֆէվզէլատէ զայրէթլէ, իշպու
մուհլիք խասթէլիկին չարէսինի պու-
լարաք. ճընսը պէշէրէ պիր ազիմ խըտ-
մէթտէ պուլունմաք շան ու շէրիֆի
իլէ սուզան օլմագտա իսէլէրտէ, պիգ-
ճէ վէրէմ իլլէթլինին թէտափիսինէ չա-
րէ արամաքտան իսէ, մէղքիւր խաս-
թէլիկէ գաթիէն տիւշար օլմամանըն
էսպապընը իրայէ իթմէք պին դաթ
խայրըլը օլաճաղընտան, վէրէմ իլլէ-
թինտէն արի օլմաք արդիւ իտէն գա-
տըն վէ երքէքլէր, աթիտէքի թէր-
թիպլէրի դուլլանմալը տըրլար:

Երեւելէ Կիւրբէյի

«Լագըրտը աղնամաղ դատըն վէ էր-
քէքլէրտէն ուզաք տուրմալը»

«Ոքաքլարըն՝ եաղըն թօղունա վէ
գըլըն չամըրընա էհէմիլլէթ վէրմէմէ-
լի»

«Իսկէլէ համալլարընա եիւք թաշըթ-
մամալը»

«Էվլատըմը հանկը մէքթէպտէ թէր-
պիլլէ իտէլիմ տիլէ տիւշիւնմէմէլի»

«Իյրատընը, մէսարիֆինէ ույտուր-
մաղա չաշըշմամալը»

«Գատընլար իլէ փափաղլարըն իշինէ
միւտախէլէ իթմէմէլի»

«Քէնտին եաեա օլարաք, թէր եա
չամաշըր իշինտէ միւլէմմա իքէն պէշ
եիւզ լիրալըք պարկիրլէրէ գօշուլու
լանտօեա օթուրան ատէմէ պաքմա-
մալը»

«Գարնըն աճ, վէ ճէպինտէ բարա
պուլունմատըղը հալտէ յօքանթալար
ճամէքեանլարընտան ուզաք տուրմա-
լը»

Յ. Մ. Հ.

ՁԱՆԱՁԱՆԻ

Կրօնաւոր մը դամբանական մը կը
խօսէր.

«Այո՛ եղբարք իմ՝ կը գոչէր «մեր
հանգուցեալ եղբայրը յանկարծական
մահուամբ մը մեռաւ — կորզուեցաւ
իւր սիրեցեալ կնոջմէն՝ որ այժմ ան-
մխիթար և յուսահատ կը մնայ իւր 28
տարեկան հասակին մէջ» —

«Քսան և հինգ տարեկան եթէ կը

հաճեք՝ գոչեց անդիէն ձայն մը հեծ-
կլտալով որ ննջեցեալին կնոջ ձայնն էր

Թատրոնի մէջ.

Ա.—«Դիմացի ոթեակը գէր կին մը
նստած է, կը տեսնես»:

Բ.—Բառորդէ մը ի վեր է կը ջա-
նամ դիտակիս առջեւ բերել, բայց միշտ
մէկ կողմը դուրսը կը մնայ:

Մ.—«Ինչէն է արդեօք որ օգա-
փոխութեան համար կանայք և աղջը-
կունք ջուրը շատ եղող տեղ երթալ
կուզեն»:

Բ.—«Ահ, շատ պարզ բան մը, ար-
դէն Աբրահամ նահապետի ժամանակէն
կայ այդ սովորութիւնը: չես գիտեր որ
Ռեբեկա իւր ապագայ ամուսինը ջու-
րի գլուխ գտաւ»:

Իտալիոյ քաղաքներէն միոյն մէջ
ծեր կոյր զինուոր մը եկեղեցւոյ մը
դուռը կը մուրար իւր կուրծքէն տախ-
տակ մը կախուած որուն վրայ հետե-
ւալը կը կարդացուէր,

պատերազմը	8
վերք	10
զաւակը	6
գումար	20

Ապուշ ճամբորդ մը պանդոկի մը
մէջ առաւօտեան դէմ անկողնին մէջ
նստած ժամացոյցը ձեռքը՝ «ժամը
վեցն է», և դեռ կարսօնը չեկուս զիս
արթնցնելու, թրէնը պիտի փախցը-
նեմ, . .

Անգլիացի.—«Մեր երկրին մէջ ըս-
քանչի յուզորդներ ունիմք. անգամ
մը աչքովս տեսայ մէկը որ կէս ժամ
ծովուն տակը կեցաւ»:

Գաղղիացի.—Անգամ մ'ալ ես տե-
սայ հայրենակիցներէս մին որ ժամա-
ցոյց բռնելով մէկ ժամ ջուրին տակը
կեցաւ»:

Անգլիացի.—«Այդ բան մը չէ՝ որ
մը երկտասարդ մը ծովը նետուեցաւ
և մէկ մ'ալ դուրս չեկաւ»:

—Հայրիկ, ինչ է վաճառականու-
թիւնը»:

—Ուրիշներուն ստակը, տղաս:

Դատարանի մը առաջ.

Դատաւոր.—Այս տասներորդ ան-
գամն է որ դատարանի առջեւ կը բեր-
ուիս, չե՞ս ամէնար:

Յանցապարտ.—Տէր իմ, դուք ա-
մեն օր կուգաք հոս՝ միթէ իմ տան
անգամ գալս չա՞տ տեսաք»:

Վերջերս քիմիագէտ մը տեղացի
չիք մը անալիզ ընելով իհետեւեալները
գտաւ իւր մէջը.

Պիքապօնաթ տընիկսուռաւ	
Թաճ	990.320
Էսանս տը լեղի	2.500
Թէնթիւռ տը քիպիբաթիւն	3,500
Օքսիքուա տը թեւնայ	270
Բաօթօքսիտ տը եաեա	2.730
Ասիթաթ տը պօթ	270
Սիւֆիտ տը ժպիտ	500
Քլուրտ տը ժաքէթ	202
Սիւֆաթ տը խելք (կասկածելի)	004

Գումար 1000

Ձայնաւորներու գործածութիւնը
խնդալու մէջ:

Երեւելի գիտուններէ փորձով
հաստատուած է թէ, որ և է անձ մը
կարելի է դատել իւր խնդալու կեր-
պէն և ձայնէն: Այն անձինք որ ա
(հա, հա օ) կը խնդան, ուղիղ և պար-
կեշտ կըլլան, աղմուկէ կախորժին, բայց
երբեմն ալ անորոշ գաղափարներ կու-
նենան: Անոնք որ է (հէ, հէն) կը խըն-
դան, հեղ, հանդարտ և մեյմաղձոտ
են: Շատ տղաքներ (հի, հին) կը
խնդան. այսպէս կը խնդան նաև, միա-
միտ, երկչոտ, անորոշ, հաճոյական և
երախտաւոր անձինք: Հօ՛ հօ՛ խնդալը
կը յայտնէ վեհանձնութիւն և գոր-
ծունէութիւն. բայց ամէն պարագայի
մէջ զգուշացէք այն անձինքներէ որք
հա՛ւ, հա՛ւ, հա՛ւ կը խնդան, զի նոքա
մարդատեաց և չար կըլլան:

ՊԵՏՐԻ

6 յուլիս 1390

Գատը-գիւղ

ԼԱՔԵՍ ՏԱՍԻՒՐԱՆՍ

ՊԵՐԻ ՎԷ ՊԱՀՐԻ ՀԱՐԻՔ ՎԷ ՔԱԶԱՅԱ
ԳԱՐՇՈՒ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Թէէ/ինաթ աքէէսի 50000000

Իհթ/եաթ աքէէսի 300000

Ալթը սէնէի միւթէճալուզ Տէրսաա-
տէթտէ իճրայի մուսէլէ իտ կէլմէքտէ
օլան մէղքիւր քուսթանհանըն մուս մէլաթը
ճարիկնին տաճա պի. իսանի սուրէլէ ճէ-
րէջանը զըմիդի տա պու քէլրէ ումում մէ-
մալքի օմանիյէ տճ. նթ. լը ը օնտէի տ-
ճիդանէ մէ իհալէ ի. իլաիկիտէն պատէմա
էմլաք վէ էշեա վէ սալիւրէ դայէթ միւթէ-
տիլ ֆիյալթ վէ հաթթալը թէտիյաթ շէ-
ր. իթլէ տաթի մուսմէլէ իճր. լը վէ գաղա
վուգուլի ապալինտէ թալմին իտէճէկի
թաաշիւտ իտէր վէ քուսթանիյը մէղքիւ-
րըն սապըք տճ. նթ. լը թալաթը տան
չիմտիյէ տէկին հէր նէ գաւոր օլիյա
վէրիլմիլ իսէ նիհայէթ 31 կիւնէ գաւոր
լիէճիւլ թաաթի:

Իշպու քուսթանհանըն թալաւ աճէն-
թալըլընտ թալէպ պու լուսուղու թադ-
տիրտէ մէրքէզ իտարէյէ միւրաճաթլարը
թալօիյէ պուսուր:

Ումում Թուրքիա աճէնթալը

Բ. Շէշիւրկես

Մէրքէզ իտարէ Ստամպուլ Պաճէ գաւու
Եօրիկաթիս խան Նոմէրօ 1

ՏՕՔԹՕՐ ԱՐԱՊԵԱՆ

Այս անգամ փարիզէն վերադարձած
ըլալով ամեն օր ժամը 8—10 կը գտնուի
Նէլիքաբու Սարմէֆէնտի Կարապետեանի
թիւ 3 դեղաբանին, ուր երեքշաբթի օրեր
ձրի կը դարմանէ իրեն զիմող աղքատ հի-
ւանդները:

Նաեւ յիշեալ դեղաբանը կը գտնուի
հեղուկ մը ընդդէմ գլխի թեկերու և կար-
գրէ մաքելու թափումը:

Այս դեղի գտնաւորութիւնը փորձով
հաստատուած է:

Մէծ Հաճառորդան և Գործարան Լաճալի և այլ

Նիւ-Եոք : Աւաճա համա՝ Բէ-16 Ռեյ է

Քէլէնէլէր

ՏԵՐ ԵՒ ՏՆՕԷՆ Յ. Թ. ՉԱԽՄԻՇԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ
հասարակութեան թէ իւր վաճառա-
ատն մէջ կը շինուին և կը նորոգուին,
կոտրած, վնասուած, աւրուած եւրո-
պական ամէն տեսակ գործիք. ինչ-
պէս կաղի կամ իւղի լամպաներ. աշ-
տանակներ. անկողնարանք. շիրիկա-
ներ. տուշեր սամալաքներ և յախ-
ճապակեայ կոտրած օր և է նիւթեր.
ըստ ամենայնի, մաքուր վայելուչ և նո-
րէն աւելի հաստատուն:

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գտնուին, եւրոպական ընտիր լամպա-
ղեր, աշտանակներ ընտիր տպակի խո-
ղովակներ որոց համար հասարակու-
թիւնը միշտ կը գանգատի թէ չկան
աստ. կլօպներ և ամեն տեսակ պատ-
րոյկներ, մէկ խօսքով, լանպայի վե-
րաբերեալ ամեն բան ինչպէս նաեւ
պանեօ և չինկոյէ լուսարարաններ և
սուշ ընելու համար պէտք եղած ա-
մէն կերպ գործիք:

Գիները յոյժ չափաւոր են. զի մեր
գործարանի սկզբունքն է ճշգրտութիւն
եւ ՀԱՒԱՏԱՐՄ ՈՒԹԻՒՆ:

*** — Փորձով գիտեմք և բնաւ տա-
րակոյ՝ չունիմք թէ յիշեալ ճարտա-
րարութեամբ ազգայնայն գործերէն մե-
ծապէս գոհ պիտի ըլլան մեր ազգա-
յինք և այլ եւս իւրեանց, այս կարգի
պէտքերն հոգալու համար սիրայօժար
պիտի դիմեն նոյն վաճառատուն և
գործարան՝ փոխանակ այլ տեղեր
յաճախելու, մինչ սա վստահութեան
ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախոր-
դաց:

Օ՛ն ուրեմն, դիմեցէք անդ և փոր-
ջեցէք:

Լ Ա Ք Է Ս

Տ Ա Ս Ի Ի Ր Ա Ն Ս

ԱՊԱՀ ՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԷՀԻ ԵՒ ԾՈՎՈՒ

ՀԻՄՆԵԱԼ ԲԱՐԻՉ

Քարիթո կարանթի

50,000,000 Փր.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԹՈՒՐԲԻՈՅ

Բ. Շէշիրլեմ

Կ. Պօլիս Պաղչէ-քարու Եօրկիատիո խան Նօ. 1

— 48 —

Ո՛չ, նախ թէպէտ ազգայն երթամ յանձ-
նարարութիւն մը կատարելու համար:

— Անցած ժամանակնիդ ծրարը կրնաք առ-
նուլ:

— Կարելի է որ այն ժամանակ ամէն մարդ-
քնացած ըլլայ, որովհետեւ վերադարձիս ջա-
ղացքին մէջ քիչ մ'ատեն պիտի մնամ, վեց օրէ
ի վեր ցօրեն յանձնած եմ աղալ տալու համար:
և որովհետեւ տանը մէջ հացը սպառելու վրայ
է, գոհ պիտի ըլլամ եթէ այս երեկոյ ալիւր
տանիմ:

— Ուրեմն, ժան Ռընօ, իրաւունք ունիք:

— Մինչեւ իսկ հրադանս հոս կը թողու՞մ ո-
րուն այս երեկոյ բնաւ պէտք չունիմ. չեմ
յուսար որ ճամբուն վրայ գայլի հանդիպիմ
առանց հաշուելու այն եղութիւնը զոր պիտի
տայ եթէ ջաղացպանը պարկ մ'ալուրը յանձ-
նէ զոր պատրաստ եմ կռնակիս վրայ բռնցած
մինչեւ տունս տանելու:

— Ժան Ռընօ, բաւական նեղութիւն է:

— Ո՛հ, այնքան ծանր չէ:

— Փոքրիկ բռն մը կրնայ ծանր դալ եթէ
ճամբան երկայն է:

— Այո՛, բայց ուսերս ուժով են:

— 45 —

Այժմ հարկ էր դուրս ելնել և այդ դիւ-
րին բան մը չէր, որովհետեւ ամէն անգամ որ
կը կոխէր սառին վրայ ելնելու, իւր ծանրու-
թեան տակ կընկճէր:

Երեք անգամ ձգեց զիս, որովհետեւ բա-
զուկները յոգնած և ցրտէն թմրած էին և ե-
րեք անգամ կրկին բռնեց զիս: Վերջապէս կո-
րովի և քաջ գործաւորներ շօգնութեան հա-
սան երկայն և խոշոր պարանով մը որոյ ծայ-
րը հանգոյց մը շինուած էր: Ձեր հօրը նետե-
ցին զայն, հայրերնիդ պարանը իմ վզէս ան-
ցուց և այն ատեն գործաւորները վեր քաշե-
ցին և այսպէս յաջողեցան զիս ցամաքին վրա
հանել:

Ժամ մը վերջ, ինքզինքս գտայ և իմացայ
թէ ինչ պատահած էր: Կ'ըսէին թէ ուրիշներ
ալ նոյն վտանգին ենթարկուելով բնաւ չէին
ազատած: Հրաշք մը կը նկատէին: Հրաշքին
դործողը ժաք Մէլիէն էր: Կեանքս ձեր հօրը
կը պարտիմ:

— Արդարեւ, այս ամէն բաները կանգիտա-
նայի, իմ սիրելի ժան Ռընօս, բնաւ Լիւսիլ
խորապէս յուզեալ:

— Օրիորդ, կրնա՞ք դատել թէ ո՞րչափ կը

ԼԵՍԲԵՍԻՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԳՐԻՄ ՀՐԳԵՀԻ
Արտօնեալ Դրամագլուխ ֆր. 10,000,000
Ստորագրեալ 1,000,000
Վճարեալ 864,000

Ընկերութիւնն կապանովագրէ ընդդէմ հրդեհի ամեն տեսակ կայրուած-
ներ, կայրաւթ, մթերանոցներու և վաճառատանց մէջ ց տնուած ապրանք-
ներ, խմոր վերամշակողի գներով և ամենաշտհա որ պայմաններով
Ընկերութիւնն միջադուամբ գործի կայրեալ ապահովագրելու համար
միացած է Եւրոպեան Հորս կարեւոր ընկերութեանց հետ՝ որոց Դրամա գը-
լուիքը եւ հանքի առաւել քան 16,000,000 ֆրանքի :

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմելի դրամական Ընդհանուր
Գործակալութիւն, ի Պոլս, Պանֆէ Գարու, ձեւալ պէյ խանի ճիւղի գէմ
թիւ 21-22:
Ընդհանուր Գործակալք բոլանդակ Թուրքիոյ
ԱՀԱԿ ԳԱՏԻՑ ԵՒ ԸՆԿ.

ԼԱՐՈՒՍԻՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴԳԵՄ ՀՐԳԵՀԻ
ՀԻՄՆԵԱԼ 4837

Կգրոնդատեղի 48, Սէն. Մաւթ վոլոց, Բարիկ
Դրամագլուխ, 4,000,000 վճարեալ վնասներն իբր 30,000,000
Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմելի դրամական Ընդհանուր Գործա-
կալութեան . Վալաթիա . Մանուտլէ վոլոց, թիւ 2, ձեւալ պէյ խանի ճիւղի գէմ
թիւ 21-22:
Ընդհանուր Գործակալք բոլանդակ Թուրքիոյ և Յունաստանի
ԳՐՈՒՍ ԵՒ ԸՆԿ.

— 46 —

սիրեմ Պ, Մէլիէն. երբէք կարելի չէ գիտնալ
թէ՝ սիրտս ո՞րքան երախտագէտ է նմա,
կրնամ ձեզ յայտնել, օրիորդ, ձեր հօրը հա-
մար պատրաստ եմ ինքզինքս մեռցնելու :

— Ժա՛ն, նա դձեզ լաւ կը ճանաչէ, գիտէ
թէ դուք ազնիւ սիրտ մ'ունիք :

— Եւ անոր շնորհիւ հրաման ունիմ հրացա-
նը միշտ վրաս կախելու որով կը յաջողիմ ամ-
բան. ինչպէս նաեւ ձերան մէջ գալլերու հօր-
սորդութեամբ զբաղիլ :

— Այդ վայրագ անասունները դոնէ չառ
կսպաննէ՞ք :

— Այս տարի հատ մը միայն սպաննեցի,
օրիորդ, երեք տարուան մէջ մեռատաներորդն :
Բայց մինչեւ տաբուոյն վերջը կը յուսամ երկու
կամ երեք հատ եւս սպաննել. Աշնան մէջ,
դեկտեմբեր և յունվ ամսոց մէջ, եղանակին ա-
մենէն ցուրտ միջոցին, այդ անասունները ա-
ւելի վայրագ նկարագիր մը կստանան և մե-
ծամեծ անտառներէն դուրս կը խուժեն : Իսկ
անոնք զորս մինչեւ այսօր կը փնտռեմ գաւա-
ռին մէջ, չեմ գտներ, անգամ մը եթէ ձեռա-
ցըս մէջ իյնան, այլ եւս չեն կրնար ազատիլ
հրացանիս հարուածէն :

— 47 —

— Խմեցէ՛ք, շիշը դեռ չը պարպուեցաւ
դեռ :

— Դուրս չարաչար կը գործադրեմ ձեր հը-
րամանը, Խօսակցութիւնս չարգիլեն ձեր վայր-
կեանները, օրիորդ :

— Ո՛չ, երբէ՛ք, իմ քով Ժա՛նս, ընդհակա-
ռակն մեծ հաճոյքով ունկնդիր կը լինիմ ձեր
խօսակցութեան :

— Բարի և վեհանձն է՛ք, օրիորդ : Դուք
եւս սրտիս մէջ ամենէն դեղեցիկ տեղերէն մին
գրաւեցիք, ինչպէս նաեւ ձեր հայրն, ա՛հ,
յարեց ոգեւորմամբ, եթէ աշխարհի վրայ կայ
կին մը որ երջանկութեան արժանի լինի, այդ
կինը դուք է՛ք, . . .

Դեռահասակ օրիորդը հառաչ մ'արձակեց :
Ու այս, պարոնը ոտք ելաւ :

— Եւ կը մեկնի՞ք, հարցուց Լիւսիլ :

— Այո՛, օրիորդ, չեմ ուզեր ուշանալ :

— Վայրկեան մը դեռ սպասեցէ՛ք, երթամ
բերեմ նոյն ծրարը որոյ վրայ ձեզ խօսեցայ,
պիտի տանիք :

— Մի նեղուի՛ք, ես անձամբ կուգամ վա-
ղը կամ յաջորդ կիրակի զայն առնելու :

— Հիմա Սիվուի չը պիտի երթա՞ք :